Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
03-02-2025 թվականի N 29-L որոշմամբ
Գործում է սկսած 2025 թվականի փետրվարի 5–ից

«Սիրահարվելով աշխարհին» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 05.02.2025թ-ից 31.03.2025թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից նախքան սույն Արշավը և Արշավի ընթացքում թողարկված Visa տեսակի քարտեր, որոնք արշավի ընթացքում կկատարեն 5 միջազգային վճարում:
1.3 **Քարտապան՝** Արդեն գործող կամ Արշավի շրջանակներում թողարկված Visa տեսակի Քարտի քարտատեր:
1.4 **Ավիատոմսի գնման հավաստագիր՝** մինչև 50 000 ՀՀ դրամ արժողությամբ հավաստագիր, որը կվճարվի Քարտապանին վերջինիս Քարտով գնված ավիատոմսերի արժեքի փոխհատուցման տեսքով:
1.5 Արշավին մասնակցելու դեպքում Քարտապանն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակներում՝ 05.02.2025թ-ից 31.03.2025թ-ը ներառյալ, ինչպես գործող, այնպես էլ նոր պատվիրված Visa տեսակի Քարտերի Քարտապանները՝ կատարելով 5 հատ միջազգային վճարում* (այդ թվում առցանց միջազգային վճարում) կմասնակցեն խաղարկությանը, որտեղ կխաղարկվեն 100 հատ մինչև 50 000 ՀՀ դրամ արժեքով ավիատոմսերի գնման հավաստագրեր:
* Ընդ որում, Wildberries և Ozon հարթակները չեն համարվում միջազգային, քանի որ նշված հարթակներով կատարված վճարումներն իրականացվում են ՀՀ բանկերի միջնորդությամբ և ձևակերպվում են, որպես տեղական գործարքներ: Նույն տրամաբանությունը տարածվում է նաև այլ միջազգային հարթակների վրա, որոնց վճարումներն իրականացվում են ՀՀ բանկերի կողմից:
2.2 Խաղարկության հաղթողները արշավի մեկնարկի օրվանից մինչև 31.08.2025թ-ը ներառյալ գնելով ցանկացած ավիատոմս վերջիններիս Քարտով՝ մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում կստանան ավիատոմսի գնման գումարի չափով վերադարձ, բայց ոչ ավել քան 50 000 ՀՀ դրամը (հարկումից հետո):
2.3 Հաղթող Քարտապաններին Ավիատոմսի գնման հավաստագիրը կուղարկվի վերջիններիս Բանկում նշված էլեկտրոնային հասցեին՝ խաղարկության ամփոփումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:
2.4 Ավիատոմսի գնման գումարի վերադարձն իրականացվելու է մեկ վճարային գործարքի համար:

2.5 Եթե վճարային գործարքի գումարը կազմում է ավելի քիչ, քան 50 000 ՀՀ դրամն է, մնացորդը չի վերադարձվում Քարտապանին:
2.6 ՀՀ Դրամից բացի այլ արժույթով ավիատոմսերի գնման դեպքում վճարման վերադարձն իրականացվելու է Քարտապանի քաղվածքում գնման ձևակերպված արժեքի չափով:
2.7 Խաղարկությանը մասնակցելու է Քարտապանի անվան և ազգանվան առաջին տառերը և Քարտի վերջին 4 թվերը (օրինակ՝ Ա. Ա. 1234), ընդ որում անկախ 5 և ավելի միջազգային գործարքների քանակից, Քարտապանը մասնակցում է խաղարկությանը 1 անգամ:
2.8 Խաղարկությունը կիրականացվի Արշավի ավարտից հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով: Խաղարկությունը կհեռարձակվի Բանկի ֆեյսբուքյան և YouTube-յան պաշտոնական էջերում՝ ուղիղ հեռարձակմամբ:
2.9 Քարտապանների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:
2.10 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: